ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 160
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքը (Եղիպատրուշ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Ապարան համայնքի (Եղիպատրուշ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքը (Եղիպատրուշ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի (Եղիպատրուշ բնակավայրը) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-040-0385-0001 կադաստրային ծածկագրով 0.37422 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	02-040-0385-0001 կադաստրային ծածկագրով 0.37422 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Եղիպատրուշ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «30» «ապրիլի» 2024թ.